

տեսանսն արքունի ի վերայ գետակին: 19 Եւ տեսին զգաւրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանս. զի էին իբրեւ զաստեղս երկնից, եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու. զի եկեալ էին անթիւ փղաւք եւ անչափ զաւրաւք: 20 Եւ տքա հասին անկան ի վերայ բանակին, յուսացեալք առ Աստուած. հարին, սատակեցին, կոտորեցին, եւ ոչ թողին ի նոցանէ եւ ոչ մի: 21 Եւ թափէին աւար բազում, եւ զփիղսն եւ զամենայն ոյժ զաւրութեան նոցա: 22 Ձերբակալ արարեալ զԴատաբէնս Վաչէ սպարապետն եւ քաջ Վահան Ամատունի, ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, եւ քարկոծ առնէին զնա քարամբ իբրեւ զայր, որ աշխարհի եւ զնդի եւ զաւրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ: 23 Եւ զազգ նորա եւ զկին եւ զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին Ըռշտունեաց յանուանեալն յԱղթամար կղզւոջ. ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զեզ թողոյր եւ ոչ զարու: 24 Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութեանն այնորիկ, եւ զտուն նոցա յարքունիս կալան:

25 Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ Խոսրովու արքային. եւ նա դներ արբէս՝ զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն եւ հազարաւորքն, կայցեն առ արքային, եւ ընդ նմա շրջեսցին, եւ մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զաւրս արքունի: 26 Չի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատաբէնայն գործիցեն, եւ ապստամբ լինիցին ի նմանէ: 27 Բայց վստահ լիներ ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զաւրավարն Յայոց մեծաց, եւ ի քաջ Վահան յԱմատունի: 28 Գումարեր զգաւրսն ամենայն տանցն աւագանոյն ընդ զաւրսն արքունի, եւ տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա. եւ հանապազ կային ի քաջութեան ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից. եւ ոչ տային անխտիր արշաւել աներել զերկիրն Յայոց, եւ ոչ նայել: Եւ կայր արքայ ի հանգստի, եւ աշխարհ ի շինութեան եւ ի խաղաղութեան զամենայն աւուրս կենաց նոցա:

ԳԼՈՒԽ Թ.

1 Յաղագս Բակուրայ բղեշխի, որ ապստամբեաց յարքայէն Յայոց. եւ թէ զիա՛րդ սատակեցաւ ի զաւրացն Յայոց, եւ փոխանակ նորա լիներ բղեշխ Վաղինակ Սիւնի:

2 Չայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Յայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բղեշխն. որ էր մի ի չորից, գահերեց բարձերեց տաճարին արքունի: 3 Ետ ձեռս յարքայն Պարսից, եւ մատնեաց զարքունի տունն, որ յեց յինքն էր: 4 Եւ Էած զաւրս արքային Պարսից ի թիկունս իւր, եւ հատաւ յերկրէն յիշխանութենէն Յայոց, եւ տայր պատերազմ ընդ արքային Յայոց՝ ուժով Պարսից թագաւորութեանն. եւ